

Պատասխաններ
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի

11-րդ դասարան

1. Միշտ պետք է ձգտել լավին, բարձրին, չպետք է համակերպվել գորշ ու տաղտկալի կյանքով ապրելուն, ապրել կարճ, բայց ունենալ ձգտում, նպատակ:
2. Խիզախ, անվեհեր, աննկուն, նպատակասլաց, ըմբոստ, համարձակ, անընկճելի և այլն
3. **մանվածապատ**- խճճված, խրթին, անհասկանալի
խարանել - 1. Խարանով՝ շիկացած երկաթով այրել՝ նշան դրոշմել, 2. փխբ. դատափետել, խիստ քննադատել, նշավակել, 3. հնում հանցագործի ճակատին նշան դրոշմել
ճապաղել - տարածվել, փռվել, ծավալվել
վեհերոտ - 1. վախկոտ, երկյուղած, ահաբեկված
ծեքծեքուն - սեթևեթող, պչրող, կոտրատվող, նագող
բաղել- ոլորվելով մագլցող բույս, շաղապատուկ, պատատուկ,
բարբաջանք - հիմարություն, ցնդաբանություն, զառանցանք,
գուղձ - կոշտ հողակտոր, հողակոշտ
քստմնելի – զարհուրելի, գարշելի, զզվելի, նողկալի
ծործոր - 1. ձոր, ձորակ, 2. խորշ, խոռոչ, ծերպ, լեռների մեջ գոյացած նեղ հեղեղատ,
4. **դարման** - 1. դեղ, ճար / հնար, միջոց / սփոփանք, մխիթարություն, 2. հացաբույսերի մանրացրած ցողունը, հարդ
գնդան- 1. դարբնի սալ, 2. անձուկ՝ խավար բանտ/ փխբ. մեկուսացած կյանք
5. **խարխափել** – 1. Չտեսնելու պատճառով ոտքերը զգույշ փոխել, շոշափելով առաջ գնալ, 2. մթության՝ խավարի մեջ դանդաղ և զգույշ առաջ գնալ, 3. փխբ. տարբեր ուղղությունների մեջ մոլորվել, հիմնական ուղին չգտնել, չկոմսորոշվել, 4. փխբ. սոցիտության՝ հետամնացության մեջ դեգերել, 5. փխբ. անհայտության՝ անորոշության մեջ լինել:
6. Ինքն չի մտնում, իսկ ովքեր մտնում են, արգելում է, նշ. Ո՛չ ինքն է օգտվում, ո՛չ էլ թողնում է, որ ուրիշներն օգտվեն աստվածաշնչից
7. **իններորդ ալիք**- վերջին հեղափոխիչ կամ կործանիչ ազդակ՝ փուլ, ըստ Հ. Այվազովսկու համանուն գլուխգործոցի
սիրամարգի փետուրներով ագռավ-ուրիշի արժանիքներն իրեն վերագրող, բայց ի վերջո ծիծաղելի վիճակի մեջ հայտնվող մարդ. ծագում է Ի. Ա. Կոնիլովի «Ագռավը» առակից (որ գալիս է Եզոպոսից): Միրամարգի պետուրները վրան առած ագռավը հալածվում է սիրամարգներից, յուրայիններն էլ նրան չեն ընդունում:
8. ուղտի պարը կամրջին բռնել - անտեղի ու վտանգավոր քայլ կատարել
կրակե շապիկ հագնել - տանջել, բաքոսին ուխտ գնալ - հարբել,
գույները թանձրացնել - չափազանցել
9. վաղանցիկ, եռոտանի, արգահատանք, մեղադրյալ

Գնահատման չափանիշներ
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի

11-րդ դասարան

2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր: